# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

«15» փետրվարի 2023 թվականի N 14-Ա

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասով , ինչպես նաև հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը .
**համայնքի ավագանին որոշում է .**

1.Համայնքի զոհված զինծառայողների , զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման , հաշմանդամների , կերակրողին կորցրած ընտանիքների , սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկելու նպատակով կազմել մշտական հանձնաժողով հետևյալ կազմով.

1)Ռուսլան Օհանյան-համայնքի ղեկավարի առաջին տեղակալ,հանձնաժողովի նախագահ
2)Ալվարդ Դավոյան-համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ, սոցիալական աշխատող-հանձնաժողովի քարտուղար
3)Գայանե Այվազյան-համայնքապետարանի առաջին կարգի մասնագետ
4)Մանուշակ Օչինյան-համայնքապետարանի առաջին կարգի մասնագետ
5)Աիդա Սարգսյան-ավագանու անդամ
6)Դավիթ Մուրադյան-ավագանու անդամ
7)Արտյոմ Տոնոյան – ավագանու անդամ

2.Հանձնաժողովին ստացած դիմումները քննարկել դրանք համայնքապետարանի աշխատակազմ մուտքագրվելուց հետո յոթօրյա ժամկետում և հանձնաժողովի եզրակացությունը անհրաժեշտ ֆինանսական միջոցի հատկացման չափի և անհրաժեշտության մասին ներկայացնել համայնքի ղեկավարին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ- | Կողմ (9) | Դեմ (0) | Ձեռնպահ (4) | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| Վարդանյան Խաչիկ | | — | — | — |
| Օհանյան Ռուզան | | — | — | — |
| Սարգսյան Աիդա | | — | — | — |
| Նահապետյան Նարեկ | | — | — | — |
| Մուրադյան Դավիթ | | — | — | — |
| Պապոյան Գոհար | | — | — | — |
| Այվազյան Սերոժա | | — | — | — |
| ՄարիկյանԱրմեն | | — | — | — |
| Այվազյան Վրույր | — | — | | |
| Մազթաղյան Գնել | | | | |
| Քալաշյան Վարսենիկ | | | | |
| Թորոսյան Հայկ | | | | |
| Տոնոյան Արտուր | | | | |
| Գրիգորյան Թամարա | | | | |
| Խաչատրյան Ռոզիտա | | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ /Խ. ՎԱՐԴԱՆՅԱՆ/